ՀԱՍՄԻԿ ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆ

«ՆԱՀԱՆՋԸ» ԵՎ ՀՐԱՉ ՋԱՐԴԱՐՅԱՆԻ «ՄԵՐ ԿՅԱՆՔԸ» ՎԵՊԸ

«Հետ եղեռնի մեր գրականության ամենեն տիրական դեմքերեն. այդ գրականության նկարագրին վավերական կնիքը կրող վիպական վաստակով մը որ, իր կարգին, նոր նվաճում մըն է՝ այդ սեռին մեջ»:

(Մինաս Թեոլեոլյան)

Սփյուռքի արտասովոր պայմանները յուրաքանչյուր գրողի օժտել են անկրկնելի ճակատագրով, որն էլ անբաժանելիորեն կապվել ու մերվել է նրանց ստեղծագործությանը: Սփյուռքահայ գրողի ստեղծագործությունը և կյանքը անբաժանելիորեն կապված են միմյանց հետ և լրացնում են իրար:

Սփյուռքահայ գրականության հիմնադիրներից է Հրաչ Ջարդարյանը, որն իր հետ բերել է կազմավորված ճաշակ և լայն աշխարհայացք: Ուղիղ մեկ հարյուրամյակ, սրարշավ ու փոթորկալից, մի ժամանակահատված, ուր ամփոփված է Հրաչ Ջարդարյանի ողջ կյանքն ու գրական ժառանգությունը: Մեծ ու շնորհալի է Հրաչ Ջարդարյանի ծառայությունն այն դժվարին ու արգասավոր տարիներին, որ սփյուռքահայ գրականությունը մղում էր կյանքի, գրականության և մշակութային բոլոր բնագավառներում:

Թերևս Հրաչ Ջարդարյանը՝ արևմտահայ գրականության երախտավոր Ռուբեն Ջարդարյանի որդին, դառնար արևմտահայ գրող, եթե չլիներ արևոտ եղեռնը, որն ընդհատեց արևմտահայ հատվածի գրականության բնականոն զարգացումը:

Սփյուռքահայ գրողները գտնում էին, որ պետք էր այնպես անել, որպեսզի հրաշքով փրկված ժողովրդի բեկորները չնահանջեն և տեղի չտան մի նոր ահավոր իրողության հանդեպ: Մարդկանց պետք էր, ինչ գնով էլ լինի, հեռու պահել ձուլման վտանգից, անգամ ինքնազոհաբերումով, պետք էր պահել իբրև հայ: «Հայ ոգվույն պահպանման նպաստելու համար՝ երկու գլխավոր գենք ունինք,— գրում է Արշակ Չոպանյանը, — 1. Կենդանի Հայաստանին պատկերը միշտ աչքի առջև ունենալ, հոգով կապվել անոր, մասնակցիլ անոր վերականգնման աշխատանքին, հրճվիլ անոր մեջ տեղի ունեցող որևէ հառաջադիմությամբ, ազգային մշակույթի ճամփուն մեջ հոն կատարած ամեն ճիգի, ձեռք բերած ամեն արդյունքի հետևիլ ու գնահատել ինչ որ անոնց մեջ կա ամուր և մնայուն, 2. հայ ազգային մշակույթի զարգացման ընդհանուր գործին՝ գաղութներու մեջ ապաստանած հայության ու մասնավորապես թուրքահայության աջակցությունը բերել, պահպանել արևմտահայ բարբառն ու գրականությունը, որ ինքնահատուկ ճոխություն մըն են մեր ազգային մտավոր գանձարանին

մեջ, եվրոպական և ամերիկյան քաղաքակրթության բարձր արժանիքները յուրացնելով մեր ազգային մշակույթին ընդլայնմանը ու հարստացմանը նպաստել»[1]:

Նահանջը հնչում էր մամուլի էջերում, հնչում էր հայկական հավաքույթների ժամանակ, սակայն անկարող էր ձեռք բերել ներգործման այն ուժը, որը գեղարվեստին էր պատկանում:

Տարագիր հայ գրողների զգալի մասը կործանված հայրենիքի հիշողությունը պահպանելու համար, օտար ափերում սփռված հայության բեկորների մեջ հոգևոր հայրենիք ստեղծելու նպատակով ոգեկոչում էր անցյալը, ստեղծում անհետացած հայ գյուղի երազային պատկերներ: Դա առավել հատուկ էր ամերիկահայ գրողներին: Այդ գրականությունը կոչվեց կարոտի գրականություն: Ինքնակատարելագործման և ինքնագիտակցման ձևավորման որոշակի մակարդում սկսում է տիրել ձուլման վտանգը և այն հաղթահարելու մտահոգությունը: Ուստի հայ գրողի խնդիրը միայն անցյալի հուշերով տարվելը չէր, այլ կյանքի բարդ հորձանուտում հայտնված գաղութահայերի մաքառումների արտացոլումը: Հանձինս Շահան Շահնուրի, Զարեհ Որբունու և Հրաչ Զարդարյանի ստեղծվեց «Նահանջի» գրականությունը, որի հիմնական և կարևորագույն խնդիրը եղավ սպիտակ ջարդը պատկերելը, սպիտակ ջարդը, որ եկավ վերասերումով, օտարացումով, ուծացմամբ, բարոյական ու ֆիզիկական կործանմամբ, որին ի հակակշիռ հարկավոր էր հայապահպանման վեհ ու դժվարին գործին նվիրվելը: Այլ կերպ ասած՝ «Նահանջի» գրականությունը կարոտի, հայրենաբաղձության, ձուլման դեմ պայքարող գրականություն էր: Եվ այդ գրականությունը ձևավորվեց, կյանքի կոչվեց ֆրանսահայ արձակում:

«Իրավ է,–գրում է Լևոն Վարդանը,–որ անոնք (Ծ. Շահնուր, Զ. Որբունի, Հ. Զարդարյան) կազբաղվեին հայ կյանքով, կներկայացնեին հայու առօրյան, հայու հուզումները, հույսերը և հուսախաբությունները, երազները և մղձավանջները, պայքարները և կասումները, թռիչքները և անկումները, և սակայն կար բան մը, որ կփոխեր ընկալումն իսկ այս հասկացողություններուն, ուստի և մտքի այս եզրերուն և կուտար նոր գրականության նոր որակ, նոր խոսք և հոր հմայում նան: Ինչ որ հատկանշական կդարձնե ֆրանսահայ արձակը՝ անոր ներքին փոթորկումն է, ներգոր խլրտումն է, որոնք հաճախ կհամընկնեին եվրոպան հուզող, դղրդացնող իմաստության և իմացական շարժումներուն»[2]:

Հրաչ Զարդարյանը սփյուռքահայության կործանման վտանգին խոր տագնապալի շեշտով ահազանգեց «Մեր կյանքը» վեպով (1934 թ.), որը լույս տեսավ Ծ. Շահնուրի «Նահանջ առանց երգի» (1929 թ.) և Զ. Որբունու «Փորձը» (1929 թ.) վեպերից անմիջապես հետո: Եվ միանգամից գտավ ջերմ ընդունելություն, ընթերցողը սիրեց ու գնահատեց վեպը: Եթե Շահնուրը իր վեպում ընդգծում էր կորստի, նահանջի, սպիտակ ջարդի իրողությունը, որպես սփյուռքահայ կյանքի գերխնդիր, Զ. Որբունին հայ ընտանիքի թշվառ կացությունը կապիտալիստական աշխարհում, մի կտոր հացի համար մղվող պայքարը, կյանքի հոգս ու

---

[1] Արշակ Չոպանյան, «Ցեղին ձայները», «Անահիտ», Փարիզ, 1929 թ., Ա տարի, թիվ 1, էջ 3:

[2] Լևոն Վարդան, «Ֆրանսահայ և ամերիկահայ արձակին վրա», Փարիզ, 1989 թ., էջ 13:

կարիքին դիմակայելու դժվարությունը, ապա Զարդարյանը՝ նոր աշխարհում դժվարությունների հաղթահարումով իր տեղը հաստատելու, գոյատևելու, պայքարով ապրելու հայոց ջանքերը:

Սխալված չենք լինի, եթե Հրաչ Զարդարյանի «Մեր կյանքը» վեպը համարենք Արշակ Չոպանյանի դեռևս 20-ական թվականների վերջին Զ. Որբունուն ուղղված պահանջ-ցանկության իրականացումը: Որն է՝ «Թշվառության դեմ պայքարին մեջ է, որ լավագույն կերպով կհայտնվի մարդուն բարոյական ուժը, անոր գերագույն առաքինությունը,–ինչ գեղեցիկ է մարդը, որ մաքուր կմնա ծայրագույն աղքատության մեջ և որ իր անվհատ ճիգով կհաղթե վերջապես անոր: Ի՞նչու Որբունի նախընտրած չլլար այդպիսի տիպար մը, որուն պես փառք Աստծո՝ մեր ցեղը շատ տված է և այսօր իսկ մեր գրականության մեջ կուտա մեծ թիվով,–որովհետև եթե մոլորվողներ, փշրվողներ, սուզվողներ, կորսվողներ կան՝ ավաղ իրոք, շատ ավելի բազմաթիվ են մեր այժմյան գաղութներու մեջ այն երիտասարդները, որ իրենց աշխատանքով նոր կյանք մը ստեղծած, դիրք մը շինած, ապագա մը ապահոված են: Ըստ իս՝ այդ էր, որ պետք է վեր հանվեր վեպի մեջ, ուր աղքատության ամբողջ զազրությունը նորեն կարելի է ցույց տալ, բայց անոր հակադրելով անայլայլ ազնվություն ու անվհատ քաջություն ունեցող մարդուն նկարագիրը»[3]*:*

Վեպը սփյուռքահայության կյանքը պատկերող լավագույն գործերից է, որտեղ Զարդարյանը պարզորոշ պատկերում է նոր աշխարհի օրենքները, հարստացման եղանակները, բարոյական չափանիշները, հայ մարդու ներքին դրամաները՝ հին ու նոր կյանքի հակադրությամբ, նյութական և հոգևոր շահագրգռությունները:

«Մեր կյանքը» վեպը օտար երկնքի տակ դեգերող հայության կյանքից առնված արտաքուստ կենցաղային, զուտ անձնական թվացող պատմություն է, որի հիմքում ընկած են, սակայն, ազգային ողբերգությունը, սփյուռքահայ ճակատագրի մտահոգությունը և ազգապահպան կարևորագույն խնդիրը: Զարդարյանը նախընտրել է պատումի այնպիսի ձև (վեպի գլխավոր հերոսն ինքն է ներկայացնում «մեր կյանքի» պատմությունը), որը հնարավորություն է տալիս անկաշկանդ վերարտադրելու հայ ընտանիքի կյանքը իր բոլոր կողմերով: Սխալված չենք լինի, եթե Զարդարյանի վեպը համարենք սփյուռքահայ կյանքի ընդհանրացում:

Վեպի գլխավոր հերոսներն են մայրը և երկու որդիները, որոնց շուրջն էլ ծավալվում է ողջ գործողությունը: Նրանք, հրաշքով փրկվելով, կարողացել են պահպանել իրենց միասնությունը (Զ. Որբունու «Փորձը» ևս հրաշքով փրկված հայ ընտանիքի նկարագիրն է, որն էլ, սակայն, չի կարողացել պահպանել միասնությունը և ենթարկվել է բարոյական և ֆիզիկական քայքայման): Ավա՜ղ, այս միասնությունը երկար տևել չէր կարող. ընչաքաղցությանը հետևում է «առնելը», որն էլ երկու եղբայրներին երկու հակադիր դիրքերում է կանգնեցնում: Վեպի սկզբից էլ զգացվում է «առնելու» սարսափը (այն ահագնությամբ է հնչում վեպում՝ ահագանգելով նոր սերնդի այլասերումը), որն էլ մտահոգում է հայ մորը. «Նորեն է առեր, ի՞նչ պիտի ընենք, Արսե՛ն, տղա՛ս... ի՞նչ պիտի ընենք»[4]*:*

---

[3] Արշակ Չոպանյան, «Անահիտ», Փարիզ, 1930 թ., № 6:

[4] Հ. Զարդարյան, «Մեր կյանքը», Երևան, 1982 թ., էջ 17:

«Անենու» այս տեսչը առաջ է բերել նորի և հնի բախում, որը ոչ թե հայրերի և որդիների բախումն է (հները չեն ցանկանում նոր ձևով ապրել, նորերը՝ հին), այլ երկու եղբայրների, որոնք միևնույն ծնողների զավակներն են, միևնույն միջավայրի մարդիկ, սակայն խիստ տարբեր իրենց հոգեբանությամբ, ձգտումներով, կյանքի նկատմամբ ունեցած ըմբռնումներով և բարոյական վարքագծով: Հանձին Արսենի, Զարդարյանը կերտել է ամբողջական մի համոզիչ կերպար, որի նմանորինակը չկա թե՛ Շահնուրի, թե՛ Որբունու, թե՛ մյուս «Նահանջի» գրողների մոտ: Արսենը սփյուռքահայ գրականության մեջ առաջին ըմբոստ կերպարն է, որի կարիքը վաղուց զգալի էր դարձել, և որը կարծես լռելյայն գոհացումն էր Չոպանյանի ցանկության: Նա հեղինակի իդեալների արտահայտիչն է, տրամադրությունների կրողը, նրա մեջ է գրողը խտացրել ժամանակաշրջանի առաջավոր գաղափարները, հայ մարդու հոգեբանությունը, նրա մտածելակերպն ու ազգային բնավորությունը: Արսենը Տրդատ չէ կյանքի նկատմամբ ունեցած իր օրենքներով ու պահանջներով: Նա թեև արևելքցի, բայց պարզ երիտասարդ է, հարյուրավորների նման նետված Արևմուտքի գայթակղվող շրջապտույտի մեջ: Դժվարին գոյապայքարը չի ընկճել նրան, ավելին՝ նրա մեջ արմատացել է հակադրվելու ոգին: Արսենը թեև քսաներորդ դարի մարդ է, սակայն հեռու է քսաներորդ դարի կապիտալիստական աշխարհի մարդ լինելուց. նրա մեջ դեռևս առկա են ազնվությունը, ճշմարտի, լավի, արդարի ձգտումը, անձնազոհությունն ու նվիրվածությունն ընտանիքին: Անձնազոհությունը միշտ էլ Արսենի համար եղել է առաջնային: Իր երջանկությունը նա տեսնում է ուրիշին երջանկացնելու մեջ: Կյանքի ծանր ու ճակատագրական հարվածն անմիջականորեն ընկել է Արսենի անձնականի վրա: Ընտանիքի հոգսերը թեթևացնելու համար եկել է Եվրոպա, աշխատել օրական 14–16 ժամ, ապա մեծ զրկանքների գնով, նյութականը ապահովելուց հետո, իր մոտ է կանչել մորը և եղբորը, որին էլ ուսումի է տվել՝ «մեծ մարդ» դառնալու ակնկալիքով: Արսենը հնի ներկայացուցիչն է, թեև պատկանում է նոր սերնդին: Նա ժառանգել է հնի և՛ լավը, և՛ վատը: Ո՞րն է այդ վատը, որը հաճախ բորբոքում է հերոսին, հետապնդում կյանքում և հոգեպես տանջում. «Ստրկությունը արյուն ու ծուծ է դարձեր, վատությունը մալարիայի պես արյունիս մեջ կդառնա, օտար մը բան որ ըսե, ոտքը իմնալս կուգա»: Սրանք անցյալից անցած դժբախտություններ են: Սակայն դեռ բոլորը չեն. կան նաև հարբեցող հորից անցած սերմեր. «Գլուխս չցաված օրերս մատի վրա կհաշվին: Ձեռքս կդողա գավաթ մը բռնելում»[5]:

Արսենը վատի կողքին ժառանգել է նաև լավը՝ պարզությունը, աշխատասիրությունը, մարդասիրությունը, ուրիշին օգտակար, նեցուկ լինելու կարողությունը: Նա անչափ ազնիվ և բարձր բարոյական նկարագրի տեր անհատ է, դրանում համոզվում ենք վեպի յուրաքանչյուր դրվագում:

Միանգամայն այլ նկարագրի տեր է կրտսեր եղբայրը՝ Տրդատը: Նա հեռու է ժառանգության թե՛ լավից և թե՛ վատից: Տրդատը չափից դուրս գործարար է, իսկ և իսկ 20-րդ դարի մարդ: Փարիզյան բարքերը լիովին յուրացրած ճարպիկ գոհարագործ է, կենսուրախ, ցինիկ (ճիշտ և ճիշտ հակապատկերը Արսենի): Գիտե, թե ինչ պետք է անել հաջողության հասնելու համար, օժտված է

---

5 Նույն տեղում, էջ 161:

վարպետորեն ընդօրինակելու, իր դերի մեջ մտնելու հմտություններով ու հարմարվողականությամբ: Որբունու ապաշնորհ հերոսը չէ նա, թեև առաջնորդվում է նույն սկզբունքներով՝ «պետք է խլել, հափշտակել, գողանալ ապրելու իրավունքը»: Տրդատը, ի տարբերություն նրա, կարողացել է յուրացնել «անվնասորեն առնելու» իրավունքը, գիտությունը: Տրդատն ունի իր կյանքի տեսակետը, որը մշակել է տարիների ընթացքում՝ ուսումնասիրելով դարի առաջավոր գործավար մարդկանց փորձը և գիտելիքները, որն է՝ «Արիեստ սովրիլն բոլոր աշակերտներն ալ գիտեն, ամենեն դյուրին, կարելի է ըսել երկրորդ մասն է հաջողության: Բուն արիեստը ազնվորեն առնելու զանազան միջոցներու գիտությունն է»[6]:

Զարդարյանի հայեցողությունը հենվում է իրականության սոցիալական հակասությունների ճիշտ ըմբռնման վրա: Մարդկային կրքերի ու զգացմունքների շարժման կենտրոնը անիրավ աշխարհում դառնում է շահը, հաշիվը: Մարդը գերի է դառնում շահամոլության: Կերպարների բացահայտման բանալին ստեղծագործության մեջ Զարդարյանը պտտեցնում է այս հայեցողությամբ:

«Առնելու» փաստը երկու հակադիր սկզբունքների վրա է դնում եղբայրներին:

«Երեսփոխան, նախարար, գործիչ, գրագետ, կառավարություն, օրենք, վարչասենյակ, ֆրանսիացի, անգլիացի, հայը, բոլորը, բոլորը կգողանան, պալքարի միահեծան օրենքը: Ով որ կույր է, ոտքի տակ կերթա»[7], — ասում է Տրդատը: Արսենը ցավով է ընդունում այդ իսկությունը: «Որ կողմն ալ դառնայի,—դառնացած հոգով ասում է նա,— ոչ մեկ քիչ թե շատ ամուր, տևական սանձի մը, թամբի մը կհանդիպեի, եղբայրս նմանապես: Մարդիկ չէին գողնար այնքան ատեն, որ նպաստավոր չէին նկատեր: Գողնալն ալ իր երկու քույրերուն պես պիգնեսի սոսկական հանգամանքով կներկայանար, ուստի և ամբողջ խնդիրը կներկայանար գիտնալ, թե պիտի հաջողի կամ ոչ»[8]:

Արսենը իր մեջ գտնելով գերմարդկային ուժ, դեմ-հանդիման է կանգնում այդ սկզբունքին, իսկ Տրդատը կամովին հպատակվում է դրան՝ իր կյանքի իմաստը տեսնելով դրա մեջ: Զուր են Արսենի՝ Տրդատին այդ ճանապարհից ետ պահելու ջանքերը, զուր՝ բարոյախոսություններն ու խնդրանքները. «Վիքտոր Հյուգոն գիտես դուն. Աշխարհ ամբողջ գլուխ կծռե անոր դեմ... Ժան Վալժանը կարդացե՞ր ես... Տղա՛, Ժան Վալժանը միտքդ բեր... Ո՞ր մեկը ըսեմ: Ան քեզի հայերեն... Ահա Զոհրապը»[9]: Կյանքի փորձություններով անցած Արսենը եղբորը վերափոխելու այլ ելք չի գտնում: Նա դիմում է գեղարվեստի օգնությանը, սակայն գալիս է տխուր եզրակացության. «Մեծ անջրպետ կա՝ մեկ կողմե ընթերցումի մը, մյուս կողմեն ընթերցումին մտքերը գործածելի փաստեր դարձնելուն մեջ»[10]:

---

6 Նույն տեղում, էջ 28:

7 Նույն տեղում:

8 Նույն տեղում, էջ 29:

9 Նույն տեղում:

10 Նույն տեղում:

Արսենի համար դժվար է նման կենսափորձով ապրելը, նույնիսկ անհեթեթ, սակայն նա իր մեջ ուժ է գտնում չենթարկվել նորին, ապրել իր ձևով՝ մաքուր ու անաղարտ, և որ ամենակարևորն է՝ մնալ մարդ:

«Իր ընկերային, ազգային մտածողություններեն վեր, այն որ իր գործերուն մեջեն մեզի կներկայանա, մարդն է, որ կկռվի, որպեսզի հում, բիրտ, անտաշ մարդը ինքնաձաղկումով հասցնե սրբության:

Գեղեցկությունը, հոգեկան պայծառությունը Հրաչ Զարդարյանի կետ նպատակն է: Անոր կարոտովը կապրի, անոնց կարոտն է, որ զինքը արվեստագետ ըրած է: Բայց ատոր կարոտը ինքնանպատակ չէ: Որպեսզի ան կարելի ըլլա, հարկ է, որ ան ընդհանրանա: Հասարակությունը, ուր ինք կապրի, պետք է տանի գեղեցկության»[11] *(Զ. Որբունի):*

Արսենի կյանքի նպատակը «անհատական կարելիության երթալն է»: Ո՞րն է այդ կարելիությունը, որին այնքան ձգտում է հերոսը: Փրկել մոլորյալներին այլասերումից և ուծացումից, նրանց տանել դեպի ճշմարիտը և բարին: Միշտ է, Արսենը մինչև վերջ էլ զոհաբերում է իր կյանքը, անձը, բայց և ստիպված է ընդունել, որ իր հույսերը այդպես էլ մնում են անկատար՝ դեմ առնելով հասարակության մեջ գործող օրինաչափություններին, ինչպես Ծ. Շահնուրի Լոխումի, Սուրենի, Խնդամյանի («Նահանջ առանց երգի») իղձերն ու երազները, որոնք, սակայն, ի տարբերություն Արսենի, զգալով իրենց անզորությունն ու տկարությունը, կործանվում են՝ կորցնելով հոգեկան հավասարակշռությունը: Այլ ելք չկա՝ կա՛մ պետք է հարմարվել նոր միջավայրին, սերտել նոր օրենքները, դառնալ այդ հասարակության լիիրավ անձ, ինչպես Տրդատը, կա՛մ հակադրվել և ապրել խոր ողբերգություն: Արսենը նախընտրում է վերջինը: Երկու դեպքում էլ Զարդարյանը անհատի կործանման տխուր իրողությունն է հավաստում: «Նահանջի» գրականության մեջ չկա նմանօրինակ կերպար, ինչպես Արսենը, որը ընկնող փորձություններին դիմակայելով կարողանա մնալ մարդ (Շահնուրի և Որբունու հերոսները կա՛մ հպատակվում են նորին, կա՛մ ֆիզիկապես և հոգեպես կործանվում): Արսենի կերպարը նորություն էր «Նահանջի» գրականության մեջ: Չնայած ամեն մի խոչընդոտ հանգամանքի, Արսենը մնում է մարդ:

«Արսենը երրորդ կարելիությունն է,—գրում է Գեղամ Սևանը,—դառնացած, դժգոհ, բայց և միաժամանակ պարկեշտ, ազնիվ այն հայ մարդը, որ գիտի, հակառակ ճնշող ու ընկնող փորձություններին, ջարդված հոգով, ուժասպառված, բայց մնալ որպես մարդ... պատնեշի վրա: Դա նվաճում էր»[12]*:*

Արհամարհելով շրջապատի կարծիքն ու արհամարհանքը հանդեպ իրեն՝ Արսենը ստանձնում է եղբոր պատճառով դժբախտացած կնոջ խնամակալի և իր եղբոր արդեն որբացած որդու հայրության դժվարին պարտականությունը: Եվ հերոսի կյանքի կարևորագույն նպատակը դառնում է ոչ այլ ինչ, եթե ոչ՝ առաքելություն՝ երեխային որպես մարդ դաստիարակելն ու մեծացնելը: «Այս աշխարհիս մեջ,—ասում է Արսենը,—ես զբաղում չունիմ: Մեկ հատ միայն. ջնջել այդ աչերուն բոցը»: Նա իր փորձություններով լի կյանքի ընթացքում մշակել է մի

---

11 Նույն տեղում, էջ 9:

12 Գեղամ Սևան, «Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր», Երևան, 1980 թ., էջ 144:

բանաձև, որով փոքրիկ Տրդատին նախապատրաստում է կյանքի դժվարություններին: Դա միաժամանակ նրա կյանքի փիլիսոփայությունն է. «Միտքդ պիտի դնես, որ երբ ուժեղ ըլլաս, մեկ բանի համար է՝ ուրիշներեն եկած հարվածը ստանալու համար... միայն»[13]:

Արսենը օտար է շրջապատում: Նրան ոչ ոք չի հասկանում, նրա զուտ մարդկային արարքները, կյանքի հորձանուտից մոլորյալ հոգիներին փրկելը համարվում է «զուտ Քրիստոսի հովեր առնել»: Սակայն այդպես չէ: Արսենը մոտենում է Աստծո Որդուն (նրա արարքը ևս առաքելություն է՝ փրկել մոլորյալ հոգիներին), բայց չի նույնանում և չի էլ կարող նույնանալ: Ինչո՞ւ: Կա շատ կարևոր խանգարիչ մի հանգամանք՝ մարդկային թուլությունը և իրականությունը, որն իր դրոշմն է դրել Արսենի նկարագրի վրա: Պարզվում է, որ Արսենն էլ զերծ չէ մարդկային արատից՝ ինչ-որ ժամանակ առանց գիտակցելու մի չնչին գողություն է արել:

Հերոսը միայնակ չէ, նրա կողքին է նաև մայրը, որը ևս չի համակերպվել նորին: Տիկին Տերտերյանը կենսական հարուստ անցյալով մի կին է, որ անցել է կյանքի դժվար ճանապարհ, իր ժողովրդի տեղահան արված բեկորների հետ վայրից վայր է թափառել՝ կորցնելով հարազատներին և ողջ ունեցվածքը: Կորուստն ու վիշտը անմոռանալ տանող այս կինը կարողացել է պահպանել հոգու ամենաթանկագին արժեքը՝ կյանքի սերը: Նրան առաջ է տարել այն բարձր գիտակցությունը, որ ժողովրդի ապագան իր որդիների ձեռքում է: Հայրենիքի եզերքի անհուն կարոտով նա հանգրվան է գտել օտար երկնքի տակ: Ողբերգական կրակների միջով անցած, կյանքի պղտոր ալիքների մեջ ընկած մարդու մեջ որտեղից այսքան ազնվություն ու հոգու վեհություն:Այս հարցի պատասխանը հեղինակը պայմանավորում է ժողովրդական բնավորության հատկանիշներով:Մոր կերպարը ևս նորություն էր «Նահանջի» գրականության մեջ: Զարդարյանը վարպետ գրչով կարողացել է կողք-կողքի ցույց տալ չնահանջողներին և նահանջողներին և ապացուցել, որ որքան էլ նահանջն անխուսափելի է, սակայն մարդը, թեև մեծ զոհողությունների գնով, կարող է ընդվզել դրա դեմ, մնալ մարդ, մնալ հայ, որն էլ սփյուռքահայության կարևոր խնդիրն է:

Եթե Արսենն ու մայրը չեն ենթարկվում նորին, ապա Տրդատը կամովի հպատակվում է դրան, որի արդյունքը լինում է սառնասրտորեն ոտնահարել իրեն անչափ սիրող Էլիզ-Երգեցիկի կյանքը, բախտի քմահաճույքին թողնել իր առաջնեկին՝ Տրդատին, նախապես պայմանավորված լինելով դրամական մեծ օժիտով ամուսնանալ գորգավաճառ Մարտիրոս պեյ Դավթյանի աղջկա հետ և դառնալ բարգավաճող և խոշոր դրամատեր՝ կորցնելով ազգային դիմանկարը, ոտնահարելով ազգային սրբությունները, հրաժարվելով եղբորից ու մորից: Զարդարյանը քայլ առ քայլ բացում է «վարակված մթնոլորտը» և ցույց տալիս այնտեղ հայտնված մարդկանց ներքին, անգամ թաքուն երեսները, նրանց ապականումն ու կործանումը: Որքան էլ որոշ անհատներ (Արսեն, տիկին Տերտերյան) ձգտեն կատարելության, միևնույն է, տառապելու են և նույնիսկ կործանվելու այդ մթնոլորտում: Նրանց մնում է հուսալ և անել այն, անգամ ինքնազոհաբերման գնով, ինչը մեկ ուրիշին դուրս կբերի, կփրկի այդ ախտածին

---

13 Հ. Զարդարյան. «Մեր կյանքը». Երևան, 1982 թ., էջ 190:

մթնոլորտից: Նրանք մարտիրոսներ են՝ ընկած «վարակված մթնոլորտի» մեջ՝ տառապող, խարխափող հոգիներին կյանքի կոչելու: Եթե Արսենը որդեգրում է եղբոր որդուն, մայրը՝ Էլիզին՝ դեմ-հանդիման կանգնելով միջավայրին և նրա անմարդկային օրենքներին:

Զարդարյանը իր վեպում հակադրության մեջ դնելով երկու տարբեր հերոսուհիների, ազգերի, կարողացել է ստեղծել ֆրանսուհու դրական մի կերպար: Նա սակավաթիվ այն կերպարներից է (Լիզ, Նենեթ), որ պատկերվել են սփյուռքահայ գրողների ստեղծագործություններում: Էլիզը իր ճակատագրով մոտ է Նենեթին (Շահնուր, «Նահանջ առանց երգի»). երկուսն էլ իրենց վիճակից դուրս գալու ելք էին որոնում արևելքցի հայ տղաների շնորհիվ, բայց բախտը նրանց դեմ է բերել տարբեր տղաների: Շնորհիվ Արսենի Էլիզը չի ապականվում, ավելին՝ ընդվզում է իրականության դեմ, ամեն մի անօրինության դեմ՝ կյանքի կոչելով մի նոր մարդու, որը հնի և նորի, չարի և բարու խմորումն է, և որի ապագան նույնքան անորոշ է, որքան իր նախորդներինը:

«Եվ երեխան, օտարության երեխան, կբերվի տուն, կմտնե տան հին, ավանդական կլիմային մեջ, անհրաժեշտության մը պես»[14] (Գր. Պըլթյան): Իրավացի չէ Պըլթյանը: Նա օտարության ծնունդը չէ, թեև ծնվել է օտար միջավայրում, թեև ծնողները ունեն տարբեր ազգային պատկանելություն: Նա իր դարի հարազատ զավակն է, նրա հաստատումների ու ժխտումների արգասիքը, բարու և չարի խմորումը, որը մի նոր որակ է, որ եկել է հաստատելու դարի էությունը: Զարդարյանը անտարբեր չէ դեպի իր հերոսուհին: Սիրով ու համակրանքով կերտելով Էլիզի կերպարը, բացահայտելով նրա հոգեկան աշխարհի գրավիչ քնարականությունը, որը շրջապատի անողորմ հարվածների ներքո ի վերջո փոխվում է խորտակված կյանքի ողբերգության, Զարդարյանը նրա մահը ներկայացնում է որպես հասարակական-բարոյական մի այնպիսի երևույթ, որը կասկածի տակ է դնում տիրող իրականության ոչ միայն բանականությունը, այլև օբյեկտիվ գոյության իրավունքը: Մարդասիրական դիրքերից քննելով կապիտալիստական այլանդակ բարքերը՝ հեղինակը, այնուամենայնիվ, արմատապես չի ժխտում դրանք կյանքի կոչած սեփական-նատիրական իրավունքները: Բայց վեպը իր գաղափարական նշանակությամբ ու ներգործմամբ ընթերցողի վրա ազդում է հենց այս ուղղությամբ: Վեպի գաղափարական բովանդակությունը՝ հեղինակի կողմից իրականության ճշմարտացի արտացոլման ու պատմականորեն առաջադեմ դիրքերից կատարած քննադատության շնորհիվ, օբյեկտիվորեն ընդունակություն է ձեռք բերել ընթերցողին ասելու ավելին, քան ինքը՝ հեղինակը նպատակադրել կամ ծրագրել էր ասելու:

Վեպում, բացի հիմնական հերոսներից, կան նաև երկրորդական հերոսներ, որոնք առավել ամբողջացնում են «կյանքի ապականված մթնոլորտը, ուր ոչ մաքուր օդ կուգար, ոչ կենարար արև»: Զարդարյանը անսովոր ուժգնությամբ է մերկացնում վաշխառուներին՝ Մարտիրոս պեյ Դավթյանին, Քաղոյին, նրանց կանանց ու աղջիկներին, որոնք մարդկային չափանիշը որոշում են նրանց գրված դիրքով ու փողի կշռույթով: Զարդարյանը շատ չի ծանրացել այս կերպարների վրա: Վիպական սյուժեի զարգացման մեջ նրանք մեծ

---

14 Նույն տեղում, էջ 12:

տարածություն չեն զբաղեցնում, բայց բուն գործողությունները պայմանավորող, գլխավոր հերոսներին շարժման մեջ դնող, նրանց հոգեբանության, արարքների պատճառաբանման կերպարներ են հանդիսանում:

Խորհրդանշական է վեպի ավարտը. «Այսօրվա սեպտեմբերի առաջին ցուրտ օրը, մտա սենյակս, ուր պատուհանիս տակ, արևի խուրձի մը մեջ թիթեռներ, հինգ, վեց, յոթ ինկեր են մեռած, կոնակի վրա, կողքի, բարակ ոտքերը ծալլած, ոմանք պրկած, թև մը տարածած, թև մը ամփոփած: Իրանները դեռ լեցուն են ու կակուղ: Գույները իրենց օղակներուն վրա՝ թարմ երեկվա պես, երբ կթռչեին: Երկուքը կեցած պատրաստ, սավառնակներու պես միջոցը կդիտեին: Դպա կոշիկիս քթովը՝ շրջեցան դիտապաստ»[15]:

Զարդի ու կոտորածի, տարագրության ճամփաներով անցած, «վարակված մթնոլորտի մեջ հայտնված Արսենի երազները Զարդարյանը համեմատում է մեկ օրվա կյանք ունեցող զարդարուն, գեղեցիկ թիթեռների հետ: Որքան տիպիկ ու պատկերավոր է այս պատկերը, որը ավելի շատ ոչ թե նոր հերոսի որոնումներն է փաստարկում, այլ՝ կորուստը: Զարդարյանի վեպը լրացնում ու ամբողջացնում է Շահնուրի և Որբունու վեպերում պատկերված կյանքը նոր հերոսներով ու մանրամասներով, ընդգծում սոցիալական հարցը, առաջադրում կենսապայքարի հնարավորություններ, որով և սփյուռքահայ հատվածին ամրապնդում է գոյատևելու դժվարին պայքարին: Վեպը գրված է կյանքի թելադրանքով: Լինելով մեծ հայրենասեր՝ Զարդարյանը չէր կարող անտարբեր դիտել եղեռնից մազապուրծ փրկվածների կործանումը, որ ոչ այլ ինչ էր, եթե ոչ սպիտակ ջարդ: Զարդարյան գրողի գրիչը ծառացավ հենց դրա դեմ:

«Մեր կյանքը» վեպը ոչ թե մեկ հայ ընտանիքի կյանքի նկարագրությունն է, այլ՝ օտար ափերում ապաստանած ողջ հայության, որի առջև ծառացել էր լինել-չլինելու խնդիրը, և պատահական չէ, որ գրողն իր վեպը վերնագրել է «Մեր կյանքը»: Դա սփյուռքահայության կյանքն է՝ իր հոգսերով ու տագնապներով, խնդիրներով, ցավերով ու մտահոգություններով:

---

15 Նույն տեղում, էջ 246: